ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան 11 փետրվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի
Կ. Բալայանի

Քննության առնելով քաղաքացի Վարդգես Վարդանյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացի Վարդգես Վարդանյանը 2015թ. հունվարի 23-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը և 2-րդ մասի 1-ին կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3-րդ, 8-րդ 18-րդ, 19-րդ, 31-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

1. Դիմողը գտնում է, որ իր նկատմամբ կիրառված իրավական նորմերը չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքներին և «... լուրջ իրավական վտանգ է ստեղծում Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքի ապահովման և պաշտպանության տեսանկյունից ...»:

Դիմողի կարծիքով, սնանկության հիմքն անվճարունակությունն է. ընդ որում, «... օրենքը ևս տարբերակում է անվճարունակության երկու ձև՝ հաշվեկշռային /բացասական հաշվեկշռի դեպքում/ և փաստացի, այն է՝ այնպիսի վիճակ, երբ պարտապանն ի վիճակի չէ պարտատերերի օրինական պահանջներն ամբողջովին բավարարել»: «... միայն այն հանգամանքը, որ ... պարտապանը թույլ է տվել օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող անվիճելի վճարային պարտավորությունների 60-օրյա կամ ավելի ժամկետով կետանց, դեռևս հիմք չի կարող հանդիսանալ տվյալ (վճարունակ) պարտապանին սնանկ ճանաչելու համար»: Այլապես, առկա իրավակարգավորումն իրավակիրառական պրակտիկայում կհանգեցնի նրան, որ վճարունակ պարտապանը ևս դատարանի վճռով կարող է սնանկ ճանաչվել:

Դիմողն իր դիմումում ներկայացրել է նաև այլ փաստարկներ:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ դատական կազմը գտնում է, որ առկա են դիմումի քննության ընդունումը մերժելու հիմքեր՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ա/ դիմումի և կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողը չի ներկայացրել պատշաճ իրավական հիմնավորումներ վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ:

Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ խնդրո առարկա իրավադրույթների ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշման, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է.

բ/ դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, քանի որ նրա պնդմամբ՝ «... դատարանի կողմից թույլ տրված դատական սխալների և վիճարկվող դրույթի այլ մեկնաբանության հետևանքով խախտվել է իր սեփականության իրավունքը...»: Հետևաբար, վերոնշյալ իրավադրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարցը՝ փորձելով այն ներկայացնել վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վիճարկմամբ:

Սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ: Հետևաբար, առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք.

գ/ սահմանադրական դատարանի դատական կազմը հարկ է համարում նշել, որ դիմողի կողմից վիճարկվող դրույթներից՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի սահմանադրականության վերաբերյալ առկա է սահմանադրական դատարանի 2008 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-735 որոշումը:

Այսպես, դիմումին կցված դատական ակտերի և դիմողի փաստարկների համալիր վերլուծությունը վկայում է, որ տվյալ դեպքում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-735 որոշման մեջ անդրադարձել է վերոհիշյալ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի սահմանադրաիրավական բովանդակությանը, սահմանել է, որ նշյալ դրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Այդուհանդերձ, ՀՀ սահմանադրական դատարանի նշյալ որոշումից հետո, մասնավորապես, ՀՀ Ազգային ժողովի կողմից 2010 թվականի դեկտեմբերի 22-ին ընդունված՝ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-13-Ն ՀՀ օրենքով խնդրո

առարկա դրույթի՝ նախկինում գործող տեքստը /3-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը/ օրենսդրական փոփոխության արդյունքում ներառվել է ներկայիս գործող դրույթի 1-ին կետում: Եվ քանի որ դիմողը վիճարկելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի սահմանադրականությունը՝ հիմնական շեշտադրումը կատարում է դրա «բ» ենթակետի սահմանադրաիրավական բովանդակություն վրա, ուստի սահմանադրական դատարանի դատական կազմն արձանագրում է, որ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի վերաբերյալ արդեն իսկ առկա է սահմանադրական դատարանի որոշումը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 6-րդ կետերով, ինչպես նաև 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Վարդգես Վարդանյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

11 փետրվարի 2015 թվականի
ՍԴԴԿՈ/2-4